դի փոխուեր է. եւ այս ենթադրութեան համեմատ Նաբոլէոն Պուրպոնեանց ցեղէն սերեալ կ'ըլլայ։

Եթէ ծիծաղական ալ ըլլայ այս յետին գիւտը, սակայն հակառակն ալ ցուցընելու բնաւ փաստեր չկան, և եթէ անակնկալ եղանակաւ օր մը նոր լուսաւորութիւնք չծագին, երկաթեայ դիմակը Պատմութեան գաղտնիք մնաց է և պիտի ըլլայ։

ԱՂԵՔՍԱՆԴՐ Ա ԻՇԽԱՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՑ

Պաղդէմպէրկի իշխանն Աղեքսանդր Յովսէփ՝ Ասիայ Աղեքսանդր Իշխանն (որ Լուդովիկոսի Դ Ասիայ մեծ դքսին հօրեղբայրն է) երկրորդ որդին է և Պաղդէմպէրկի Յուլիա իշխանուհոյն՝ դստեր Հալբէ կոմսին, որ էր

digitised by A.R.A.R.@

որբեմն պաշտօնեայ պատերազմի և Լեհաստանի թագաւորութեան վոյեվոտ։ Ծնած ըլլալով 'ի 5 ապրիլ 1857, գրեթէ 24 տարուան է։ Ձախաձեռնի (Mariage morganatique) ամուսնութենէ ծնած ըլլալով, Ասիայ իշխան տիտղոսն կրելու իրաւունք չունի։ Իրեն ծննդեանը համար՝ յԱնգղիա և 'ի Ռուսաստան թագաւորող ընտանեաց գրեթէ նոյն աստիճանի ազգական է։

Հաւանականաբար այս կրկին ազգականութեան համար է՝ որ Պադդէմպէրկի երիտասարդ իշխանն այնպիսի ընտրութեան արժանացաւ, որուն սակայն առաջին սկիզբն տուողն Անտրաշի կոմսն եղաւ։

Աղեքսանդր իշխանը 1877-78 ամաց պատերազմին՝ ռուսական բանակին մէջ իբրև տեղակալ էր Տիգուորաց 8°. գնդին։ Ինքը կը վերաբերի նաև գերմանական բանակին իբրև տեղապահ Պահպանութեան Ասիանեան վիշապագունդ 2°. գումարտակին։ Իր անդրանիկ եղբայրն, Պադդէմպէրկի Լուդովիկոս իշխանն, բրիտանական ծովակալութեան մէջ տեղակալ է։

Հազիւ հազ իշխանն իր ընտրութեան լուրն առաւ, մեկնեցաւ 'ի Լիվատիա իր յարգանքն ընելու Ռուսաց կայսեր, որ զինքը զօրավար անուանեց և իրեն յանձնարարութիւնքը տուաւ իրեն։

ԽՐԱԽՈՅՍ ՎԱՐԴԱՆԱՆՑ

Փարազունք Հայոց որդիք եմք Հայկայ,
Հայրենեաց հուր սուրբ յոգիս վառեալ կայ ·
Յաղթական դրօշու նըշան հիասքանչ՝
Խաչ սուսեր 'ի մի շողայ մեզ ճաճանչ։
Օ՛ն բազուկք 'ի վեր 'ի Բարձրեալն անուն՝
Ըզվրէժ հայրենեաց յերկինս երդնուցուն,
Ջընջել պարսկազեն ըզպիղծ գարշապար,
Ի Հայաստանեայց սըրբել ըզխաւար։
Ահ՝ 'ի գլուխ յինից յաղթից Վարդանայ,
Դողումն, ահ 'ի գունդ Պարսից ընթանայ։
Օ՛ն յառաջ 'ի դաշտ խազմիցն յԱւարայր,
Զատրուշան բագին տալ հողմոյ յաւար ·
Մեզան սուրբ կանգնել ըզսէր հայրենեաց
Զարիւնս յայն ձօնել Անմահին փառաց։

Հ. Ա. Թ.

digitised by A.R.A.R.@